ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2.7/2.10-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N 2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Ծրագրի հավելված N 2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացման համար՝ համապատասխանաբար «Բոգոսսի» ՍՊԸ-ի և «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրերի ընթացքն ապահովելու նպատակով Հանձնաժողովի 2024թ. փետրվարի 5-ի նիստի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ

Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների

իրականացումն ապահովելու նպատակով՝ համապատասխանաբար «Բոգոսսի» ՍՊԸ-ին և «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են գրություններ, ներկայացնելով Հանձնաժողովի առաջարկները պայմանագրի կնքման նպատակով:

Մասնավորապես,

• «Բոգոսսի» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրում առաջարկվել է պայմանագրի նախագծի N1 և N5 հավելվածներով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հաստատված N2 հավելվածի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման վերստուգելի չափանիշներին, որով նախատեսվում է առնվազն 50 Reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում, մինչդեռ պայմանագրի նախագծով ներկայացվել է թվով 30-ը:

• «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրում առաջարկվել է պայմանագրի նախագծի N1 հավելվածով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հաստատված N2 հավելվածի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառման վերստուգելի չափանիշներին, որով նախատեսված է Armenia.travel վեբկայքի համար անգլերենով առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում, իսկ Կազմակերպության կողմից ֆինանսական նախահաշվով ներկայացված է 25-ը:

Ի պատասխան վերը նշված առաջարկների կամզակերպությունները էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել են իրենց դիրքորոշումները՝

Մասնավորապես՝

• «Բոգոսսի» ՍՊԸ-ն հրաժարվել է իրեն ներկայացված առաջարկից, հաշվի առնելով կազմակերպության ներկայիս ծանրաբեռնվածությունը և ավելացվող աշխատանքի ծավալը:

• «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն հրաժարվել է իրեն ներկայացված առաջարկից պատճառաբանելով, որ ընկերությունը չի կարող ներկայումս իրականացնել հավելյալ ծավալով աշխատանք՝ մասնավորապես Ծրագրի N2 հավելվածի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառման շրջանակներում Armenia.travel վեբկայքի համար անգլերենով նախատեսվող 25 բլոգ փոստերի փոխարեն առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում, միևնույն գումարի դիմաց, որը ներկայացվել էր նախահաշվի համապատասխան բաժնում: Միաժամանակ նշելով, որ Ֆինանսական նախահաշիվը կազմելիս որոշ աշխատանքների համար արդեն իսկ ավելցուկային ծավալով էր կատարվել հաշվարկը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Հաշվի առնելով «Բոգոսսի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված տեղեկատվությունը դադարեցնել Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով «Բոգոսսի» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

2. Հաշվի առնելով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված տեղեկատվությունը դադարեցնել Ծրագրի հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

3. Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով հայտարարված և ամփոփված մրցույթների արդյունքները համարել չեղյալ, մրցույթները Armeps համակարգում լուծարել և հայտարարել նոր մրցույթներ:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Շ.Հովսեփյան - _____